## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«16» մայիսի 2025թ. N 65-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 61-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի մայիսի 8-ի N INS032-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 61-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.05.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի մայիսի 16 -ի N 65 -Ա հրամանի

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի մայիսի 5-ի N 61-Ա հրամանի

**«ISO ստանդարտները քաղաքաշինության բնագավառում»**

**միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Մայիսի 8 | 18.30-ից 21.30 | «ISO ստանդարտները քաղաքաշինության բնագավառում» | Ծովինար Բիլյան | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 1-ին կարգի մասնագետին շնորհվելու է 3 կրեդիտ, 2-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 3 կերդիտ, 3-րդ կարգի | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34, մասնագիտություններ | անվճար |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մասնագետին շնորհվելու է 3 կրեդիտ | | |
| 2 | Մայիսի 17 | 18.30-ից 21.30 | «ISO ստանդարտները քաղաքաշինության բնագավառում» | Ծովինար Բիյան | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 1-ին կարգի մասնագետին շնորհվելու է 3 կրեդիտ, 2-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 3 կերդիտ, 3-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 3 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34, մասնագիտություններ | անվճար |